

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Ռ. Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այն կենսական խնդիրներն ու որոշումները, որոնք նշված են ԽՄԿԿ ծրագրի, համագումարների, ԽՄԿԿ կենտկոմի և Խորհրդային կառավարության կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման ուղղությամբ, պահանջում է ինչպես գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության մասնագետների համատեղ, միասնական աշխատանքային գործունեություն:

Գիտագործնական պրոբլեմների հաջողությամբ հալթահարումն ու իրագործումը նույնպես պահանջում են ամենօրյա հետևողական, ժամանակակից պահանջները բավարարող ստեղծագործական մոտեցում: Ֆիզիկական դաստիարակության համակարգի հետագա կատարելագործումն էլ ավելի կապահովի համակողմանի և ներդաշնակ զարգացած, առողջ ու կոփված անհատի դաստիարակությունը, որը կարևոր նախապայման է երկրի զաղափարաբարդաբանական, սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Դրան առավել կարևոր նշանակություն տվեց ԽՄԿԿ 27-րդ համագումարը, որտեղ նշվեց. «Մարդկանց առողջության պահպանումը և ամրապնդումը առաջնակարգ կարևորության գործ է: Առողջության պրոբլեմները մենք պետք է դիտենք սոցիալական լայն դիրքերից, դա որոշվում է նախ և առաջ աշխատանքի ու կենցաղի պայմաններով, բարեկեցության մակարդակով»¹:

Անհատի բազմակողմանի զարգացման զաղափարը առաջ է քաշվել գիտական կոմունիզմի հիմնադիրների կողմից: Կ. Մարքսը դաստիարակություն ասելով նկատի ունի ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական դաստիարակություն և տեխնիկական ուսուցում²: Դաստիարակության այս երեք բաղադրամասերն իրարից անբաժան են և լրացնում են միմյանց:

Մարդու ֆիզիկական և մտավոր ունակությունների միաձուլումը արդի ժամանակաշրջանում դարձել է անհրաժեշտություն: «Կուսակցությունը հետևողականորեն վարում է գիտակից, բարձրակիր մարդիկ դաստիարակելու գիծ, որոնք ընդունակ լինեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատանքի ժողովրդական տնտեսության մեջ, հասարակական ու պետական կյանքի տարբեր բնագավառներում, գիտության ու կուլտուրայի ոլորտում ակտիվ գործունեության»³:

Վ. Ի. Լենինը նկատի ունենալով, որ հանրային ամբողջ հարստությունը պատկանում է աշխատավոր ժողովրդին, գրում է. «... ժողովրդական մասսաները ոչ մի տեղ այնպես շահագրգռված չեն իսկական կուլտուրայով, ինչպես մեզանում, այդ կուլտուրայի խնդիրները ոչ մի տեղ այնպես խոր ու այնպես հետևողական կերպով չեն դրվում, ինչպես մեզանում»⁴: Լենինի այս դրույթը ավելի մեծ կարևորություն ու արդիականություն է ստանում այսօր:

Արդի ժամանակաշրջանում գիտությունն ու տեխնիկան առաջընթաց վերելք են ապրում, որի հետևանքով անհամեմատ պակասում է մարդու տարբեր տեսակի շարժողական գործողությունները, հմտությունները, նրա ֆիզիկական գործունեությունը ինչպես արտադրության, այնպես էլ առօրյա կյանքում: Ուստի ավելի է մեծանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի անհրաժեշտությունը յուրաքանչյուր մարդու կյանքում:

Ղեկավարվելով կուսակցության և կառավարության որոշումներով, ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին կից բարձրագույն դպրոցի խորհուրդը կարևոր տեղ

¹ ԽՄԿԿ 27-րդ համագումարի նյութերը, Եր., 1986, էջ 88—89:

² Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ղնտիր երկեր, հ. 2, Եր., 1973, էջ 103—104:

³ ԽՄԿԿ ծրագիրը, Եր., 1986, էջ 76:

⁴ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 33, էջ 550:

է տվել նաև ուսանող-երիտասարդության ֆիզիկական դաստիարակությանը՝ որպես կոմունիստական քանտիարակության անբաժանելի մաս:

«ԽՍՀՄ-ում գոյություն ունի և կատարելագործվում է ժողովրդական կրթության մասնական սիստեմ,— ասվում է ԽՍՀՄ Սահմանադրության 25-րդ հոդվածում,— որն ապահովում է քաղաքացիների հանրակրթական և պրոֆեսիոնալ պատրաստությունը, ծառայում է երիտասարդության կոմունիստական դաստիարակությանը, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացմանը, պատրաստում աշխատանքի և հասարակական գործունեության համար»⁵:

ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության միահիտրության 10 փետրվարի 1980 թ. № Ի—12 «Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողի ֆիզիկական դաստիարակության հետագա բարելավման միջոցառումների մասին» հրահանգում⁶ ասվում է, որ բուհերի և ֆիզիկական դաստիարակության ամբիոնների ղեկավարները ֆիզիկական դաստիարակության աշխատանքները պետք է համարեն ուսումնադաստիարակչական անընդհատ գործընթաց, որը վճռական դեր է խաղում ուսանողության առողջության, բազմակողմանի ֆիզիկական զարգացման, ֆիզիկական կուլտուրայի կրթության և մարզական վարպետության կատարելագործման ուղղությամբ բուհում նրանց ուսումնառության բոլոր տարիների ընթացքում, ուսանողների կազմակերպչական ու հրահանգչական որակների դաստիարակում, որպեսզի կարողանան ինքնուրույն կազմակերպել ու անցկացնել ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքներ ինչպես բուհում, այնպես էլ արտադրությունում և ապահովեն ուսանողության առաջադիմության ու աշխատանքի արդյունավետության բարձրացումը⁷:

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը պետական մեծ կարևորություն են տալիս ֆիզիկական կուլտուրային և սպորտին, բուհերում պարտադիր կերպով մտցված է ֆիզիկական դաստիարակության առարկան, որն ուղղված է ուսանող երիտասարդության առողջության բարելավմանն ու ամրապնդմանը, կենսունակության բարձրացմանը, ֆիզիկական կատարելությանը, առաջադիմության բարձրացմանը, աշխատանքի բարձր արտադրողականությանը, կյանքի և ստեղծագործական երկարակենցությանը, ակտիվ հանգստի կազմակերպմանը, հայրենիքի պաշտպանության նախապատրաստմանը:

Բարձրագույն դպրոցի խնդիրներից մեկը ուսանողության ֆիզիկական պատրաստությունն է, որը հաստատված է 19.07.1978 թվականին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից և մեջցված է «Ժողովրդական կրթության մասին ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքների» մեջ:

Գիտատեխնիկական հեղափոխության արդի պայմաններում ավելի անհրաժեշտություն է առանձնում ֆիզիկական դաստիարակությունը: Գիտական, տեխնիկական, քաղաքական ինֆորմացիայի մեծ հոսքը ուսանողից պահանջում է մտավոր լարվածություն և ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածություն: Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով պարբերաբար պարապելը օժանդակում է վերջիններիս վերացմանը, նպաստում ուսանողության համակողմանի և ամբողջանակ զարգացմանը, օգնում բարձրագույն դպրոցում բարձրորակ մասնագետների պատրաստմանը⁸:

Ծանոթանալով բուհի ֆիզիկական դաստիարակության հիմնական խնդիրներին և նպատակներին, պարզ կրառնա այդ ամբիոնների բազմաբնույթ և բազմաբովանդակ աշխատանքը, որը ելնում է բարձրագույն հաստատությունների համար նախատեսված ծրագրից: Այն հետևյալն է.

— Ուսանողության շրջանում դաստիարակել բարձր քարտյական, կամային և ֆիզիկական որակներ, կոմունիստական գիտակցություն, պատրաստել նրանց աշխատանքի և հայրենիքի պաշտպանության:

— Պահպանել և ամրապնդել ուսանողության առողջությունը, աջակցել օրգանիզմի ճիշտ ձևավորմանը և համակողմանի, ներդաշնակ զարգացմանը, ուսուցման ամբողջ ընթացքում բարձր արտադրողականության պահպանմանը:

— Ուսանողության համակողմանի ֆիզիկական դաստիարակությունը «Պատրաստ աշխատանքի և ԽՍՀՄ պաշտպանության» համամիութենական ֆիզկուլտուրային համալիրի նորմաների և պահանջների ծավալով:

⁵ ԽՍՀՄ Սահմանադրությունը (հիմնական օրենք), Երևան, 1977, էջ 14—21:

⁶ «Бюллетень Министерства высшего и среднего специального образования СССР», 1960, № 3, в книге «Высшая школа», часть 1, М., 1978, с. 224.

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս «Ֆիզիկական դաստիարակության ծրագիր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար», Եր., 1977, էջ 3:

ուսանողության պրոֆեսիոնալ--կիրառական ֆիզիկական պատրաստությունը, հաշվի առնելով սպազա աշխատանքային գործունեության առանձնահատկությունները:

Աստիճանները՝ ֆիզիկական դաստիարակման կազմակերպման և սպորտային մարզման տեսության ու մեթոդիկայի միմուրներին մասին անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելը, ուսանողներին սպորտի հասարակական հրահանգիչներ և դատավորներ պատրաստելը:

— Նպաստել ուսանող մարզիկների մարզական վարպետության կատարելագործմանը:

Ֆիզկուլտուրային կոլեկտիվների և մարզական ընկերությունների աշխատանքային գործունեությունից պարզ երևում է, որ նրանք զբաղվում են զուտ ֆիզկուլտուրային և մարզական հարցերով, իսկ բուհում վերջիններին հետ ապելանում է նաև ֆիզիկական դաստիարակության առարկայի դասը, նրա հիշտ և արդյունավետ կազմակերպումը (քանի որ հասարակությունում ոչ բոլոր բուհերն ունեն նորմալ պայմաններ): Բուհերի ֆիզիկական դաստիարակության մեթոդները պետք է կարողանան այնպես կազմակերպել և իրագործել իրենց առջև դրված այդ բազմաթիվ խնդիրները, որ մեկը հաջողի և լրացնի մյուսին, քանի որ ուսումնական գործընթացը երկարատև ու բարդ է և իր մեջ ընդգրկում է ճշված բոլոր խնդիրները:

Բայց արդյո՞ք հանրապետության բոլոր բուհերն են կարողանում հաջողությամբ և ժամանակին իրագործել իրենց առջև դրված խնդիրները: Կարելի է ասել, որ ո՛չ: Որովհետև չունեն համապատասխան պայմաններ, բացակայում են մարզակառույցները, ժամանակակից մարզագույքը, պակաս են բարձրորակ կադրերը: Սակայն կարելի է աշխատանքը կազմակերպել այնպես, որ հնարավոր լինի իրագործել այն: Պետք է դասերն ու մարզական պարասպունքները կազմակերպել և կառուցել այնպես, որ նրա բովանդակությունը համապատասխանի եղած պայմաններին, իսկ եթե դրանք չեն բավարարում կամ քիչ են, կարելի է և պետք է փոխադարձաբար ու արդյունավետորեն օգտագործել հարևան կամ մոտակա կազմակերպությունների ունեցած հնարավորությունները, բազան, գույքը՞:

Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրությունը, հանրապետության սպորտկոմիտեն և Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի բյուրոն 26 հունվարի 1976 թ. համատեղ որոշում են ընդունել «Ֆիզիկական դաստիարակության ուսումնական ընթացքի և հանրապետության բուհերում, տեխնիկումներում, դպրոցներում ՊԼՊ համալիրի աշխատանքների դրվածքի մասին»: Ելնելով ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 17 հունվարի 1972 թ. համամիությունական ֆիզկուլտուրային նոր համալիրի ընդունման և նրա իրագործման ընթացքից, ընդունել են մի շարք միջոցառումներ այն իրականացնելու նպատակով:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ բարելավվել է ուսանողության ֆիզիկական և առողջական վիճակը, բարձրացել է ֆիզիկական դաստիարակության դասի որակը: Բուհերի ֆիզիկական դաստիարակության բոլոր դասախոսները ունեն բարձրագույն կրթություն: Միայն 1974 թ. ֆիզիկական դաստիարակության դասախոսների թիվը բուհերում աճելացել է 5 %-ով:

Կատարելագործվում է ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացը: Եթե նախկինում ֆիզիկական դաստիարակության ստարկան հանրապետության բուհերում դասավանդվում էր մեծամասամբ 1-ին և 2-րդ կուրսերում, սպա այսօր այն որոշ բուհերում դասավանդվում է մինչև 3-րդ, իսկ մի քանիստ նաև 4-րդ կուրսերում: Սակայն համաձայն **ՖՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի 1988 թ. հունիսի 6-ի № 56 ԵՆ հրահանգի հրահանգված է**, որ ֆիզիկական դաստիարակության ստարկան նախատեսված է **դասավանդել** պարտադիր ուսումնական բոլոր տարիներում, յուրաքանչյուր կիսամյակում **ստուգարքի ընդունում**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆիզիկական վարժությունները սկսով հանգըստի միջոց են, հարկավոր է ֆիզիկական դաստիարակության պարասպունքները պլանավորել և անցկացնել նաև քննաշրջանի, ուսումնական պրակտիկաների ընթացքում, մարզական-առողջարարական ճամբարներում, դրա համար օգտագործելով ուսուցման տարբեր ձևեր ու մեթոդներ, այն հարմարեցնելով եղած պայմաններին և հնարավորություններին:

Բուհերում, տեխնիկումներում, դպրոցներում բարելավվում է մասսայական առողջարարական ֆիզկուլտուրային և մարզական աշխատանքները, անցկացվում են ամենատարբեր մասշտաբի սպորտային մրցումներ և առաջնություններ դասարանների, դպրոցների, խլմբերի, կուրսերի, ֆակուլտետների, բուհերի միջև: Ամրանում են դպրոցների, տեխնիկումների, բուհերի ֆիզկուլտուրային կոլեկտիվներն ու մարզական ակումբները: Սովորող և ու-

* 56-«Спутник физкультурного работника». М., 1972, էջ 20.

ասնող տասնյակ մարզիկներ դարձել են հանրապետական, միութենական, Եվրոպայի և աշխարհի առաջնությունների, օլիմպիական խաղերի հաղթողներ ու մրցանակակիրներ:

Որոշակի բարելավվել է գիտահետազոտական և մեթոդական աշխատանքները: Հաճախակի են դարձել գիտական կոնֆերանսների անցկացումը ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, նրանց օժանդակող և առնչվող մնացած մասնագիտությունների (ֆիզիոլոգիայի, բժշկության, մանկավարժության, հոգեբանության, պատմության, սոցիոլոգիայի և այլն) ուղղությամբ:

ԽՄԿԿ Կենտկոմի 1979 թ. ապրիլի 28-ի «Գաղափարական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշումը մեծ ոգեվորությամբ ընդունվեց հանրապետության ֆիզկուլտուրային կազմակերպությունների, մարզական աշխատողների, ֆիզկուլտուրմիկների և մարզիկների կողմից: Որոշումը ուսումնասիրելով և քննարկելով կոլեկտիվներում, ընկերություններում, գերատեսչություններում, գիտական և ուսումնական հաստատություններում, սպորտի շրջանային և քաղաքային կոմիտեներում, մարզադպրոցներում, հավաքական թիմերում և մարզախմբերում, պահանջ դրվեց վերացնելու տեղ գտած թերությունները, ինչպիսիք են՝ քննադատության և ինքնաքննադատության չդիմանալը, աշխատանքները հնացած մեթոդներով, ձևակերպում, միօրինակ կազմակերպելը, միջոցառումները, մարզումներն ու դասերը անհրապույր անցկացնելը, ֆիզկուլտուրայի և սպորտի թույլ պրոպագանդումը, գիտական նվաճումների անբավարար օգտագործումը բարձրորակ մարզիկների պատրաստման գործում և այլ քաղաքական ու հակահասարակական երևույթները¹⁰:

Ֆիզկուլտուրան և սպորտը, նշում է հանրապետական սպորտկոմիտեի կոլեգիան, ոչ լրիվ կերպով է օգտագործվում խորհրդային մարդու հոգեկան և քառոյակային կերպարի ձևավորման, նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման, բարեկամական զգացմունքների, ընկերասիրության և կոլեկտիվիզմի ոգով դաստիարակելու գործում: Բուրժուական գաղափարախոսության, հարբեցողության և ծխելու վնասակար սովորույթների, կաղապահական և իրավական խախտումների, խնամակալական շռայլումների ու շորթումների, կրոնական նախապաշարմունքների դեմ պայքարելու համար ևս այն ամբողջությամբ չի օգտագործվում: Ուստի, ելնելով իրավիճակից, հանրապետական սպորտկոմիտեի կոլեգիան որոշեց վերացնել տեղ գտած թերությունները այս կարևոր օղակում և այն դեմ պատշաճ մակարդակի վրա, իսկ ԽՄԿԿ Կենտկոմի «Գաղափարական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների հետագա բարելավման մասին» որոշումն ընդունել աշխատանքների ղեկավարման և կատարման ուղեցույց: Յուրաքանչյուր ֆիզկուլտուրային կազմակերպության աշխատողի գլխավոր խնդիրը համարվեց ֆիզկուլտուրմիկներին և մարզիկներին դաստիարակելու բարձր գաղափարայնության և հայրենիքին նվիրվածության ոգով, քնակչությանը նախապատրաստելու բարձր արտադրողական աշխատանքի և հայրենիքի պաշտպանության:

Գաղափարական աշխատողների համամիութենական խորհրդակցությունում, որը տեղի ունեցավ 1979 թ հոկտեմբերի 18-ին Մոսկվայում, նշվեց. «Այսուհետև ևս պետք է մշտական ուշադրություն նվիրվի խորհրդային մարդկանց, առանձնապես աճող սերնդի ֆիզիկական դաստիարակությանը: Կուսակցական, բոլոր հասարակական կազմակերպությունների ու հիմնարկների պարտքն է ամրապնդել ֆիզկուլտուրային շարժումը, բարելավել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանները, այդ նպատակի համար օգտագործել 1980 թ. Մոսկովյան օլիմպիական խաղերի պրոպագանդիստական նշանակությունը:

Մեր երիտասարդությունը պետք է կոփված լինի և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես»¹¹:

Հարկ է նշել, որ, հակառակ դրան, բուհերի և տեխնիկումների մեծ մասում դեռևս չըկան անհրաժեշտ պայմաններ ֆիզիկական դաստիարակության և մարզական պարսպամունքների լիարժեք կազմակերպման և անցկացման համար: Այսպես, օրինակ, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը և կոնսերվատորիան ֆիզիկական դաստիարակության առարկայի դասերի անցկացման համար զբաղեցնում են ընդամենը մեկական լսարաններ: Պարզ է, որ մնան պայմանները դժվարացնում են ամբողջությամբ կատարելու բուհի առջև դրված այս կարևոր խնդիրները:

Հանրապետության որոշ բուհերի ռեկտորատները անբավարար են կատարում ֆիզկուլտուրայի և սպորտի վիճակը բարելավելու մասին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Միճխտրների խորհրդի որոշումները¹²:

¹⁰ Որոշում Հայկ. ԽՍՀ Միճխտրների խորհրդին առընթեր ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի կոլեգիայի, 3 հուլիսի, 1979 թ., արձ. № 8, կետ. № 1/1:

¹¹ «Երեկոյան Երևան», 17 հոկտեմբերի 1979:

¹² «Խորհրդային Հայաստան», 19 հունիսի 1978:

ՊԱՊ նոր համալիրի ներդրման և ֆիզիկական դաստիարակության կատարելագործման մասին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Միմիստրների խորհրդի որոշումները, ԽՍՀՄ ժողովրդական կրթության մարմինների հրամաններն ու հրահանգները կյանքի կոչելու համար հանրապետության ժողովրդական կրթության միմիստրության կղեգիան, Հայաստանի հանրապետական սպորտկոմիտեն և ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն 1976 թ. հունվարի 26-ին համատեղ որոշել են հանձնարարել քարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորներին, տեխնիկումների ու հանրակրթական դպրոցների դիրեկտորներին, ԼԿԵՄ կոմիտեների քարտուղարներին, շրջանային և քաղաքային սպորտկոմիտեների նախագահներին վերացնելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի աշխատանքներում տեղ գտած թերությունները: Միաժամանակ նշվում է, որ պետք է ուժեղացնել հսկողությունը ֆիզիկական դաստիարակության ամբիոնների, սպորտային ակումբների վարչության, դասախոսների կողմից տարվող աշխատանքների նկատմամբ, հասնել այն բանին, որ ուսումնական հաստատության շրջանավարտների 80—85 %-ի ֆիզիկական պատրաստականության վիճակը համապատասխանի ՊԱՊ համալիրի նորմաների պահանջվող աստիճանին: Սակայն ստուգումները ցույց են տալիս, որ այն կազմում է ընդամենը 23,6 %, այսինքն՝ ուսանողության մեկ չորրորդն է հանձնել ՊԱՊ համալիրի նորմաները:

Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման և այն մարդկանց առօրյայում արմատավորելու գործում մեծ դեր են խաղում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետ կադրերը, որոնց պատրաստման կարևոր ու պատասխանատու գործը դրված է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի և Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության բաժնի վրա:

Բավականին կարճ ժամանակամիջոցում ներկա գիտա-մանկավարժական քարձրակ կադրերի շնորհիվ ինստիտուտները դարձել են հանրապետության ֆիզկուլտուրային շարժման, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ տարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների կենտրոններ, որին զգալիորեն խթանեց ինստիտուտներին կից ստեղծված (1982 թ.) պրոբլեմային գիտական լաբորատորիաները:

Ինստիտուտները պատրաստել են համաշխարհային ճանաչում գտած տասնյակ մարզիկներ, աշխարհի և Եվրոպայի, օլիմպիական խաղերի, ԽՍՀՄ-ի չեմպիոններ, մրցանակակիրներ, ռեկորդակիրներ:

Այս հաջողություններին նպաստեց նաև շահագործման հանձնված մարզադահլիճները և ուսումնական նոր մասնաշենքերը: Նշված հաջողությունների հետ մեկտեղ կան նաև թերություններ, բացթողումներ, որոնք մեծապես խոչընդոտում են ֆիզիկական կուլտուրան և սպորտը ներդնելու և այն ամբողջ ժողովրդի սեփականությունը դարձնելու գործին: Դեռևս որպես հիմնական թերություն շարունակում է մնալ ֆիզկուլտուրային-մարզական շարժման մասսայականության ցածր մակարդակը:

Պետք է նկատի ունենալ, որ ուսանողության հետ տարվող աշխատանքներին զուգընթաց անհրաժեշտ է նաև հոգ տանել տեղերում պրոֆեսորադասախոսական և սպասարկող օժանդակ անձնակազմի ֆիզիկական պատրաստականության կատարելագործման և վերավորակվորման ուղղությամբ: Այս հանգամանքը անկասկած կրարձրացնի ինչպես դասախոսական կազմի, այնպես էլ ուսանող երիտասարդության առողջական վիճակը, դասի կազմակերպման արդյունավետությունը, ուսման առաջադիմությունը, մասնագիտական-կիրառական ֆիզիկական պատրաստականությունը, գիտական, ստեղծագործական կյանքի երկարակեցությունը:

Այնուհետ, ուր կա ղեկավարման և կառավարման գիտական, հետևողական ու հոգատար ստեղծում, կլինի և արդյունք:

Р. В. ХАЧАТРЯН—Физическое воспитание как часть общей системы воспитания.— По всестороннему физическому воспитанию учащейся и студенческой молодежи проведена достаточная работа в учебных заведениях республики, однако не повсеместно и не полностью осуществляются важнейшие решения партии, правительства и органов народного образования в этой области. Автор наряду с констатацией проведенной положительной работы указывает на недостатки и упущения, которые оказали отрицательное влияние на организацию дела гармоничного воспитания подрастающего поколения.